

Կարապետ պաշարեալ բարբարոսներէ եւ բոլոր յոյսը սասնցուոց մնացեալ, իջան իրենց վեռներէն եւ նոյնը ըրին, ինչ որ Բագարատ, Աշոտ եւ Գուրգէն իշխանները ըրած էին: Յանցա՞նք էր հայ քրիստոնէայ եղբայրը ի սրոյ, ի շղթայից ազատել, յանցա՞նք էր Զրիստոսի մզկիթ դարձած եկեղեցիները Զրիստոսի դարձնել, յանցա՞նք էր Ս. Կարապետի վրայ հրով եւ սրով եկողները սուրի մատնել: Եթէ սասնցուոց ըրածը յանդիմանութեան արժանի է, ուրեմն արդար եւ իրաւացի են այս անզգամ ժողովրդեան մեզ դէմ գործած ամէն չարութիւնքը: Բայց ան ատեն հետեւեալքը մտածեցէք, տեսարք մեծագօրք, հետեւեալքը, որ հայ ազգին մէջ կրնայ փճացնել մինչեւ վերջին սերմունքը, որ Թադէոսի, Բարդուղիմէոսի եւ Լուսաւորչայ արիւնով ուռճացաւ այս Հայաստան աշխարհիս վրայ:

— Մեզի այդչափ երկայն քարոզութեան պէտք չի կար,— ըսաւ Սմբատ Սպարապետ հանդարտ խստութեամբ,— դու առաջարկութիւնդ ըրէ, մեր հոգեւոր տէրը քեզ այդ բանին համար հրաման տուաւ խօսելու, եւ նայէ՛, որ ինչչափ կարելի է շուտ եւ համառօտ կատարես խնդիրքդ:

Ան խօսքերը եւ զրուցուածքին եղանակը կը յայտնէին, որ Յովնան փուճ տեղ կ'աշխատէր համոզել այնպիսի մարդիկ, որ իրենց մտքի դրածոն անդին բան մը չունէին ընելիք, բայց որովհետեւ սրբազան պարտականութիւն մը կար այդ յիմար մարդկանց ճշմարտութիւն մը զրուցելու եւ զիրենք կորստենէ ազատելու, սկսաւ խօսիլ երկրորդ անգամ:

— Մենք լեռնցի պարզ մարդիկ ենք, տեսարք, աշխարհիս կառավարութենէն չենք հասկնար, բայց ցաւով սրտի կը տեսնենք, որ նոքա որոնց ձեռքն է ամէն կառավարութիւն՝ շատ անգամ թշնամուոյն խաբէութեան զոհ կ'երթան. իրենք մեծ մարդիկ են, իմաստուն են, իրաւունք ունին իրենց անձը եւ իրենց ունեցած գանձերը պահպանելու, մենք այնպէս կարծենք, թէ լաւ կ'ընեն, որ կը քաշուին իրենց ամրոցները վտանգի ժամանակ, թող տան ժողովրդեան եւ քահանայից հաւատքի պատերազմը պատերազմիլ: Ուստի այդ նպատակաւ Սասնոյ ժողովուրդը կը խնդրէ հոգեւոր